

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/4

15 մայիսի 2012թ.

Քննարկվեց <Լազմիլ> ՍՊԸ 07.05.2012թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 18.04.2012թ. թիվ 1001442 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.10.2011թ. թիվ 1001442 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Լազմիլ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 18.04.2012թ-ին կազմվել է թիվ 1001442 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 75.773.549 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 12.05.2012թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել <Լազմիլ> ՍՊԸ վերաբերյալ: Նկատի ունենալով, որ Ընկերության հարկային պարտավորությունների չափի որոշման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243, 244 և 248 հոդվածներով, ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Է.Հովհաննիսյանի 14.05.2012թ-ի որոշմամբ նյութերով նշանակվել է դատա-հաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ <Փորձաքննությունների ազգային բյուրո> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. <ա> անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Հաշվի առնելով, որ <Լազմիլ> ՍՊԸ գործով ՀՀ ԿԱ ՊԵԿ Հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում քրեական գործի հարուցման անհրաժեշտությունը պարզելու նպատակով, Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Լազմիլ> ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ <Լազմիլ> ՍՊԸ 07.05.2012թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:



S.ՔԱՐՍԵՂՅԱՆ